ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/38

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.08.2017թ. թիվ 03/26-3/15613-17 գրությամբ «Էլշին» ՍՊԸ-ին և «Գոռպլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ 01/61-16857 գրության հիման վրա, 28.08.2017թ. թիվ 03/26-3/15613-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Էլշին» ՍՊԸ-ին և «Գոռպլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 23.08.2017թ. թիվ 01/61-16857 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգին «Էլշին» ՍՊԸ-ն և «Գոռպլաստ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակիցներ) մասնակցել են համատեղ գործունեությամբ: Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա է եղել անհամապատասխանություն, մասնավորապես, հայտով ներկայացված թիվ 1 հավելվածով միայն «Էլշին» ՍՊԸ-ն է հայտարարել, որ ցանկություն ունի մասնակցել գնանշման հարցմանը, ինչպես նաև բացակայել է «Գոռպլաստ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն:

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի կողմից մեկ աշխատանքային օրով կասեցվել է բացման նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցվել է Մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը, և համաձայն Կարգի 42-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. <u>«Էլշին» ՍՊԸ-ի և «Գոռպլաստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլշին» ՍՊԸ-ն և «Գոռպլաստ» ՍՊԸ-ն 05.09.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Էլշին» ՍՊԸ-ն և «Գոռպլաստ» ՍՊԸ-ն չեն ստացել որևէ ծանուցում Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/2» ծածկագրով հայտի անհամապատասխանության մասին:»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերությունների ներկայացուցիչ Խաչիկ Այվազյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/38 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 28.08.2017թ. թիվ 03/26-3/15613-17 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 23.08.2017թ. թիվ 01/61-16857 գրությունը, «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/2» գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/2» գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.08.2017թ. ժամը 14:30-ին կայացած նիստի N 2, 16.08.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 3 արձանագրությունները, Ընկերությունների կողմից ներկայացրած գրավոր դիրքորոշումը, Պատվիրատուի կողմից ներկայացրած ոչ ավտոմատ ծանուցումը հավաստող՝ էլեկտրոնային կայքից արտատպված օրինակի պատճենը.

Երևանի քաղաքապետարանի կողմից՝ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) համատեղ գործունեության կարգով մասնակցության հայտ են ներկայացրել «Էլշին» ՍՊԸ-ն և «Գոռպլաստ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 11.08.2017թ. ժամը 14:30-ին կայացած նիստի N 2 արձանագրության 1.1 կետով Ընկերությունների կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություն՝ Հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, Հավելված 1-ում չի նշվել, որ «Գոռպլաստ» ՍՊԸ-ն ցանկություն ունի մասնակցելու Ընթացակարգին, ինչպես նաև նշված Հավելվածում բացակայել է «Գոռպլաստ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերություններին մինչև 15.08.2017թ. շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 16.08.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ 11.08.2017թ. ժամը 14:30-ին կայացած նիստի N 2 արձանագրության 1.1 կետով Ընկերությունների հայտում արձանագրված անհամապատասխանությունները վերջիններիս կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել:

Նույն արձանագրության 2.2 կետով Հանձնաժողովը որոշել է «Էլշին» ՍՊԸ-ի և «Գոռպլաստ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերությունների ներկայացուցիչը պնդեց, որ Ընկերությունները չեն ստացել Պատվիրատուի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ որևէ ծանուցում:

Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ նշված ծանուցումը Ընկերություններին ուղարկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, և Խորհրդին ներկայացրեց նշված արձանագրության ծանուցումը հավաստող՝ էլեկտրոնային կայքից արտատպված օրինակի պատճենը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,
- 32-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը:
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի՝

- 2.7-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են նույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):
- 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,
- 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- 8.10-րդ կետի համաձայն՝ եթե նույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով, լիազորված մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի հավելված 1-ով սահմանված՝ մասնակցի կողմից ներկայացվող մասնակցության դիմումով նախատեսվել են հետևյալ պարտադիր վավերապայմանները՝

մասնակցի անվանումը, պատվիրատուի անվանումը, չափաբաժնի համարը, երկրի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը և ստորագրությունը:

Խորհուրդն արձանագրում է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Էլշին» և «Գոռպլաստ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում չի նշվել, որ «Գոռպլաստ» ՍՊԸ-ն ցանկություն ունի մասնակցելու Ընթացակարգին, ինչպես նաև նշված Հավելվածում բացակայել է «Գոռպլաստ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Էլշին» և «Գոռպլաստ» ՍՊԸ-ների կողմից չներկայացվեց նաև որևէ ապացույց այն մասին, որ վերջիններս չեն ստացել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Պատվիրատուի կողմից ոչ ավտոմատ ձևով ուղարկված ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Խորհուրդը գտնում է, որ «Էլշին» և «Գոռպլաստ» ՍՊԸ-ների կոնսորցիումը՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելով՝ խախտել է Կարգի 42-րդ կետով և Հրավերի 8.10 կետով սահմանված պահանջները, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Էլշին» և «Գոռպլաստ» ՍՊԸ-ների հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 28.08.2017թ. թիվ 03/26-3/15613-17 գրությամբ «Էլշին» և «Գոռպլաստ» ՍՊԸ-ներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Էլշին» և «Գոռպլաստ» ՍՊԸ-ներին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ